212 Ամեն տեղ կերթամ ես Տեր Հիսուսի հետ,

1. Ամեն տեղ կերթամ ես Տեր Հիսուսի հետ,
Ամեն տեղ կապահովե զիս Նա հավետ,
Առանց Իրեն ոչ մեկ տեղ կըլլամ ուրախ,
Ամեն տեղ Հիսուսի հետ կերթամ անվախ:

Ամեն տեղ, ամեն տեղ անվախ, անվրդով,
Ամեն տեղ Փրկչիս հետ կերթամ ապահով:

2. Երբ Տէրոջ հետ եմ, մեկու ես չեմ կարոտ,
Բարեկամք երբ զիս լքեն, Հիսուս է մոտ,
Թե բաժինս ըլլա վայր մը տառապանաց,
Հիսուսով այն տեղն իսկ կ’ըլլա տուն փառաց:

3. Ամեն տեղ ես Տերոջմով ննջել կրնամ,
Թե ըլլա, որ հոս աչքերս ալ չբանամ,
Բայց Տերոջ փողին ձայնեն երբ արթննամ,
Հիսուսի պայծառ դեմքեն պիտ կշտանամ: